

Ա. Ս. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԳԼԱՁՈՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Գլաձորի համալսարանը Հայաստանի միջնադարյան բարձրագույն դպրոցների ոսկեշղթայի մի հպոր օղակն է, որը ուսումնակրթական գործը նոր մակարդակի հասցրեց և սկիզբ հանդիսացավ համալսարանական կրթության: Բարձրագույն կրթությունը Հայաստանում սկիզբ է առնում հինգերորդ դարի արշալույսին. «Հայաստանի մէջ գոյութիւն ունեցող միակ բարձրագոյն ուսումնարանը, Վաղարշապատի մայր-վարդապետարանը, վոր Վռամշապուհ կը հովանաւորէր եւ ուր Սահակ և Մաշտոց անձամբ կը դասախօսէին, գրեթէ ոչինչով կը տարբերէր յունական բարձրագոյն դպրոցներէն, վասն վի հոն ալ կը դասախօսուէին Աստուածաշունչը կազմող Գրոց ուսումէն վատ, քրիստոնեայ դաստիարակութեան անհրաժեշտ դատուած գիտութիւնները, որոնք էին **քերականութիւնը, հռետորութիւնը** և **տրամասութիւնը** (դիալեկտիկան):

Այս էր ժամանակի ուսմանց ծրագիրը»[1]:

Սրանց հետ դասավանդվում էր նաև մեկնողական և վկայաբանական գրականություն:

Վաղարշապատի դպրոցում դաստիարակվեցին այդ հարյուրամյակի բոլոր նշանավոր հոգևոր և աշխարհիկ գործիչները, որոնց մի մասը մասնակցեց Ավարայրի ճակատամարտին և զոհվեց:

Դեռևս այդ ժամանակներից սկսած կային նաև մասնագիտացված դպրոցներ. եթե Վաղարշապատի բարձրագույն վարժարանում պատրաստում էին ուսուցիչներ, գրիչներ, թարգմանիչներ և քարոզիչներ, ապա Սյունյաց դպրոցի մենաշնորհն էր «զվարդապետութիւն բանին և զթարգմանութիւն գրոց» սահմանված՝ «...ի սրբոյն Սահակայ եւ երանեալ վարդապետէն Մեսրոբայ»[2], իսկ Արշարունյաց դպրոցինը՝ գրչության արվեստը, որտեղ Ե դարի վերջերին և Զ դարի սկիզբներին «ժողովեալ էին մանկունք ճարտարք և գիտունք Հայոց»[3], և «գրչութեան արուեստ ունէին և զսուրբ գիրսն յաւրինէին... երեսուն և վեց վարդապետք»[4]:

Երբ եռյակ գիտությունների դասավանդման համար անհրաժեշտ ձեռնարկներ թարգմանվեցին ու գրվեցին և դրանք ամբողջովին ամրապնդվեցին նորաստեղծ հայ դպրության ծրագրում որպես ուսումնակրթական հիմնավոր համակարգ, Դավիթ Անհաղթը առաջադրեց հայ իրականության մեջ քառյակ գիտությունների՝ թվաբանության, երաժշտության, երկրաչափության և աստղաբաշխության ուսումնակրթական ծրագիրը: Նա համակարգեց իր ժամանակի ողջ գիտելիքները և առաջադրեց գիտությունների մի դասակարգում, որը հանդիսացավ միջնադարյան աշխարհիկ կրթության հիմք:

---

[1] **Ա. Ալպոյաճյան,** Պատմութիւն Հայ դպրոցի, հ. Ա., Կահիրե, 1946, էջ 72;

[2] **Ստ. Օրբելյան,** Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 27:

[3] Անդ, էջ 113:

[4] **Գ. Հովսեփյան,** Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 7;

Այն, ինչ առաջադրում էր Դավիթ Անհաղթը, մարմնավորեց Անանիա Շիրակացին Է դարի երկրորդ կեսի սկզբներին: Նա գրեց «Քննիկոն» համայնագիտական դասագիրքը, ժամանակի կաթողիկոս Անաստաս Ակոսեցու համաձայնությամբ, որպեսզի դրվի բարձրագույն կրթության հիմքում: Ի դեպ Արևմտյան Եվրոպայում ևս քառյակ գիտությունները Զ—ԺԵ դարերում բարձրագույն կրթության հիմք էին հանդիսանում: Ինչպես Դավիթ Անհաղթը, այնպես էլ Անանիա Շիրակացին իրենց տեսությունները ու ծրագրերը կառուցում էին հին հունական փիլիսոփայության և դպրոցական ծրագրերի հիման վրա՝ դրանք քաղելով ոչ թե Արևմտյան Եվրոպայից, այլ ուղղակի սկզբնաղբյուրից, հունական միջավայրից՝ հարմարեցնելով և ծառայեցնելով հայ իրականությանը:

Անանիա Շիրակացին «Քննիկոնի» մեջ շարադրում է «ոչ միայն քառիցն արհեստք, այլ բոլոր էակացն խոկմունս», այսինքն՝ շարադրանք ոչ միայն քառյակ, այլև բոլոր գոյերի մասին գիտությունները: Այսպիսով, «Քննիկոնի» մեջ «մթերեալ են տոգորք աստուածային և ենթակայեցեալ ամենայն արհեստի մակացութեան, և նախադասեալ է թուականութեանն և երաժշտականութեանն..., երկրաչափութեանն և աստղաբաշխութեանն... և կկնի այսոցիկ յարամանեալք արհեստք և մակացութիւնք, մատենագրութիւնք և գրէ եթէ ամենայն բոլոր վարժումն հռետորական»[5]:

Դժբախտաբար Շիրակացին քիչ կարողացավ գործադրել իր մշակած ուսումնական ծրագիրը: Նրանից հետո էլ հայոց վարդապետարանների ուսուցման հիմքում շարունակում էր մնալ եռյակ արվեստը: Սակայն աստիճանաբար քառյակ գիտության տարրեր էին ներմուծվում վարդապետարաններում. Ստեփանոս Սյունեցին իր գիտական թարգմանություններում բավականին նյութ է բերում աստղաբաշխության, օդերևութաբանության և երաժշտության վերաբերյալ, իսկ Ժ դարում Տաթևի վարդապետարանում եռյակ գիտությունների հետ միասին դասավանդվում էր երաժշտություն և պատրաստում էին նաև «արհեստաւորք նկարչացն և գրողաց անհամեմատ»[6]:

Հայ միջնադարյան բարձրագույն դպրոցների ծրագրում արմատական փոփոխություն է տեղի ունենում ԺԱ դարի սկզբին, Բագրատունյաց թագավորության ժամանակ, և այն կապվում է նշանավոր մատենագիր, փիլիսոփա, մանկավարժ Գրիգոր Պահլավունի Մագիստրոսի անվան հետ:

Նա Պետրոս կաթողիկոսից խնդրելով Անանիա Շիրակացու «Քննիկոնից» մի օրինակ (որը արգելված էր կաթողիկոսարանում 667 թվականից), այն դնում է Սանահնի իր ճեմարանի կրթության հիմքում՝ ձուլելով սեփական ծրագրի հետ: Հանձնարարում է նաև Անի քաղաքում Պետրոս կաթողիկոսի ղեկավարությամբ գործող բարձրագույն դպրոցին: Մագիստրոսի դպրոցում անցնում էին նաև բժշկագիտություն և առասպելավարժություն[7]: Վերջինիս տակ հասկացվում էր հայ ժողովրդական առասպելների և դյուցազնավեպերի ուսուցում, նաև առակների՝ այսօրվա ըմբռնմամբ:

Այսպիսին էր վարդապետական ծրագիրը ԺԱ դարում Սանահնի, Բջնիի, Անիի բարձրագույն դպրոցներում: Այդ ծրագիրն ավելի խորացվեց նույն Անիի և Հաղբատի վարդապետարաններում արդեն քառյակ գիտություններով դաստիարակված Հովհաննես Սարկավագի ձեռքով ԺԱ դարի վերջին և ԺԲ դարի սկզբներին: Քառյակ արվեստի արմատավորման հետ միասին, նա կարգավորում է նաև «Կարգադրութիւնք գրոց սրբոց» ցանկը, որը հայտնի է «Սարկավագյան մատենացանկ» անունով: Հետագա տարիներին դասընթացի մեջ է մուծվում Աբասի որդի Գրիգորի «Պատճառաց գիրքը»:

ԺԲ դարի վերջին և հաջորդ դարի սկզբում Հայաստանի նշանավոր բարձրագույն դպրոցը Մխիթար Գոշի վարդապետարանն էր, ուր բազմաթիվ աշակերտներ նրա մոտ ստանում էին «յուսումն վարդապետութեան», որի մեջ ավելանում է նաև իրավաբանական գիտությունը: Նրա աշակերտ Հովհաննես Վանականի Խորանաշատի դպրոցում (ԺԳ դարի առաջին կեսը) նույնպես սովորում էին «ալբանն վարդապետական»: Նրա կազմած «Հարց և պատասխանիք» դասագիրքը ունի հանրագիտարանային բնույթ: Նույն ծրագրով էր («վարդապետական բանին») դասավանդում իր աշակերտներին Վարդան Արևելցին Կայենաձորի և Խոր Վիրապի բարձրագույն դպրոցներում, որոնք հարատևեցին մինչև 1271 թվականը: Վարդան Արևելցին իր դպրոցի համար շարադրեց հայոց պատմության, աշխարհագրության, քերականության դասագրքեր, մեկնեց Հնգեմատյանը, Սաղմոսները, Երգ երգոցը, Դանիելի մարգարեությունը, գրեց խորանների մեկնություն, դրվատներ, քարոզներ և այլն: Նրա մահից հետո (1271 թ.) դպրոցը տեղափոխվեց նոր ռաբունապետ Ներսես Մշեցու հայրենիք՝ Մշո Առաքելոց վանք, և գոյատևեց մի տասնամյակից ավելի, ուր, բնականաբար, սովորում էին նույն ծրագրով:

---

[5] **Գրիգոր Մագիստրոս**, Թղթեր, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 8:

[6] **Ստ. Օրբելյան**, Պատմութիւն, էջ 226;

[7] **Գր. Մագիստրոս**, նշված աշխատ., էջ 228;

Հիշատակված միջնադարյան հայ բարձրագույն գլխավոր դպրոցների կողքին կուգահեռաբար գործում էին նաև մեծ ու փոքր այլ վարդապետարաններ ինչպես բուն Հայաստանի, այնպես էլ Կիլիկյան հայկական պետության տարբեր վանքերում ու քաղաքներում, որոնցում ուսուցումը հիմնականում տարվում էր նույն ծրագրով, որը, սակայն, հարմարեցվում էր վարդապետարանի մասնագիտական թեքմանը, ուսուցման տևողությանը և դասախոսական անձնակազմին:

Այդ դպրոցներում ևս մշակվում, հարստացվում էր վարդապետական ծրագիրը: 981 թ. Դավիթ քահանան Անի քաղաքում ուսուցման համար պատրաստում է դասագիրք, որն սկսվում է աշխարհիկ գիտությունների վերաբերյալ նյութի շարադրմամբ: Ձեռագրի պահպանված մասում ունենք տոմարական, տիեզերագիտական, ժամանակագրական, պատմական, գեղարվեստական (հանելուկ), փիլիսոփայական, թվաբանական, երկրաչափական երկեր, հոդվածներ և քաղվածքներ: ԺԱ դարի սկզբում Հովհաննես Կոզեռն Տարոնացի վարդապետը, որ Անիից տեղափոխվել էր Երևանի Անանիա առաքյալի անապատը, Աշտարակի Անանիա եպիսկոպոսի հանձնարարությամբ գրում է «Մեկնութիւն տոմարի»: Մխիթար Գոշի բարձրագույն դպրոցին կուգահեռ Հաղարծինի դպրոցում նշանավոր երաժիշտ Խաչատուր Տարոնացին երաժշտության արվեստն էր մշակում խորությամբ, իսկ Վարդան Արևելցու դպրոցին կուգահեռ՝ Կիրակոս Գանձակեցու Նոր Գետիկի դպրոցում Աստվածաշնչի ցանկերի ու նախադրությունների կազմման աշխատանքներ էին տարվում: Այդ աշխատանքները իրենց ավարտին հասցրեց Վարդան Արևելցու աշակերտ Գեվորգ Սկևռացին Կիլիկիայի Սկևռայի դպրոցում: Մանրանկարչության արվեստը կատարելության է հասնում Հռոմկլայի դպրոցում հանճարեղ Թորոս Ռոսլինի ջանքերով, իսկ Դրապարկում, Արքակաղնի դպրոցից ժառանգելով, մշակում և կատարելագործում են մանրուսմունք երաժշտական ժողովածուն:

Մշո Առաքելոց վանքից Հայոց վարդապետարանը տեղափոխվեց Վայոց ձորի Աղբերց վանք, որը մականվանվեց Գլաձորի վանք, իսկ դպրոցը վերաձեց համալսարանի. այստեղ նորոգվեց «վկարգս վարդապետական եղանակաց»:

Այսպիսով Գլաձորի համալսարանի հիմնադրումը կապվում է Հայոց վարդապետարանի նոր ռաբունապետ Ներսես Մշեցու անվան հետ:

Լինելով հունական ու լատինական դպրություններին գիտակ անձնավորություն, հիանալի իմանալով հայրենի դպրությունն ու իր ժողովրդի պատմությունը, ունենալով նաև խոր Վիրապի դպրոցում Վարդան Արևելցու հետ աշխատելու փորձը և խորհուրդները, Ներսես ռաբունապետը մշակում է դպրոցի ընդլայնման ծրագիր, որը աստիճանաբար իրականացվում է Գլաձորի համալսարանում իր և հաջորդների ջանքերով: Այն կազմված էր «ըստ էլլադական սահման պայմանի», որի տակ հասկացվում էր «յոթ ազատ արվեստները», որոնք ընկած էին նաև եվրոպական համալսարանների ուսուցման հիմքում: Այդ է պատճառը, որ Գլաձորը կոչվում է «երկրորդ Աթենք», ապա նաև՝ «իմաստութեան մայրաքաղաք» կամ «մայր իմաստութեան»:

Վարդապետարանը Առաքելոց վանքում գոյատևում է մի տասնամյակ ծանր նյութական պայմաններում: Քրդերի հալածանքից ու սրածությունից խուսափելով՝ Ներսեսը ժամանակավորապես արձակում է դպրոցը, հեռանում հայրենի գավառից և 1281 թ. աշունը և 1282 թ. ձմեռը անցկացնում Քաջբերունիքում:

1282 թ. գարնանը Ներսես Մշեցի ռաբունապետը իր դպրոցը վերահաստատում է Վայոց ձոր գավառի Աղբերց վանքում, որը հետագայում մականվանվում է Գլաձորի վանք, իսկ վարդապետարանը՝ Գլաձորի համալսարան:

Ներսես ռաբունապետի դպրոցի նոր տեղի մասին հնագույն ձեռագրական վկայությունը Մատթեոս Կիլիկեցու հիշատակարանն է: 1283 թ. նա գալիս է սովորելու Ներսեսի մոտ, որը նրան հանձնարարում է մի ձեռագրի ընդօրինակություն: Հիշատակարանում Մատթեոսը գրում է.

«Որոյ եկեալ յայս գաւառի,
Որում անուն Վայձոր կոչի,
Հուպ ի ջիրիմըն Սիւնեցի,
Ի յԱղբերց վանս մենաստանի,
Յերկրորդ Աթէնս պանծալի,
Առ ոտս հաւր մեր Ներսէսի»[8]:

Ներսես Մշեցին ծանոթ էր Սմբատ և Պռոշ իշխաններին: Դեռևս 1268 թ. Վարդանը, որի հետ աշխատում էր Ներսեսը, աղաչում է հիշել «և ամենայն երախտաւոր պարոնացն՝ Սադունին, Սմբատայ, Քրդին, Պռաւշայ»: Սրանք Վարդանի գլխավորած բարձր դպրոցի երախտավոր իշխաններն էին: Նոսն դրպրոցի աստանդական ռաբունապետը Առաքելոց վանքում, ամենամյա նեղությունների և հալածանքների մեջ ապրելով, համոզվում էր, որ դպրոցի գոյության համար ամենից առաջ անհրաժեշտ է ապահովություն, որպեսզի օտար տիրապետության ու կամայականության պայմաններում հնարավոր լինի դպրոցը պահ-

[8] Հ. Տաշյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վենետիկ, 1895, էջ 834;

պանել: Այդ պատճառով նա մերժում է մեծոփեցիների՝ իրենց մոտ հիմնավորվելու առաջարկը և դիմում է վերը հիշված երախտավորներին և հաստատվում Աղբերց վանքում:

Վայոց ձորի Աղբերց վանքի անմիջական տերերը Պռոշյաններն էին, Սյունյաց աշխարհի ընդհանուր տերերը՝ Օրբելյան իշխանները, իսկ հոգևոր տերը՝ Սյունյաց միտրոպոլիտը: Ահա սրանք էլ հովանավորում են Գլաձորի համալսարանը, կատարում են շինություններ և ապահովում ապրելու և սովորելու պայմանները:

«Զորս իրս հարկաւոր է ի պէտս ուսման, —գրված է «Վասն անապատաւորաց» քարոզում,—պարտ է զի կամքն վարդապետին լինի ուսուցանող և այն առանց ագահութեան և փառասիրութեան, երկրորդ՝ ջերմ սէր ունողացն, երրորդ՝ խաղաղութեան, չորրորդ՝ տեղիքն անապատ և անդորր»: Ներսես Մշեցի րաբունապետը Գլաձորի համալսարանի համար ստեղծում է բոլոր պայմանները, որպեսզի այն գոյատևի: Ապահով վայրում տեղավորվելուց, համալսարանը երախտավորներով ապահովելուց, ծրագրային ձեռնարկներ պատրաստելուց հետո նա Եսայի Նչեցուն ձեռնադրում է վարդապետ և իրեն փոխարինող կարգում: Րաբունապետությունը նրան հանձնելուց հետո վախճանվում է 1284 թ. փետրվարի 6-ին «ի բարիօք ծերութեան» և թաղվում Գլաձորում: Հայոց առաջին համալսարանի հիմնադրի անանց պատիվը նրան է վերապահվում:

Եսայի Նչեցու եռանդուն ջանքերի շնորհիվ Գլաձորի համալսարանը դառնում է գիտության ու լուսավորության խոշոր կենտրոն և համահայկական համալսարան:

Ի՞նչ էին դասավանդում Գլաձորի համալսարանում, ո՞րն էր Գլաձորի վարդապետարանի ուսումնական ծրագիրը, որով նա առանձնանում էր նախորդներից և վերաճում համալսարանի, որի րաբունապետը «մերս վսեմամիտ և սրբազնակատար ուռճալրացեալս երեքպեանն հաստատադիր կառուցմամբ հրաճաշակ Եսայիաս, փայլէր ի գահս իմաստութեամբ և ներկուռ կրթութեամբ զնախասացելովն լնլով և զիւրն յառաջոտելով՝ գեղեցիկս իմն արտադրիւր քան զհաւուցն իւրոց նախապատճառաց»: Բանն այն է, որ Առաքել Հաղբատեցու վկայությամբ՝ «ի մերումս ամանակի եղծեալ ապականէր կարգ եկեղեցոյ, մանաւանդ Հայկազեան տոհմի, իսկ նշոյլ և կայծակն գիտութեան գտաւ և վերստին ուղղեցաւ և դարձեալ նորոգեցաւ զկարգս վարդապետական եղանակաց»[9]:

Թե ինչ էին դասավանդում հայոց վարդապետարաններում, մասամբ մեզ հայտնի է մինչև Վարդան Արևելցու գործունեությունը Խոր Վիրապի դպրոցում: Գլաձորի վարդապետական ուսուցման կարգի և առարկաների մասին տեղեկություններ ստանում ենք այնտեղ գրված ձեռագրերի, մատենագրական գործերի և ձեռագրական հիշատակարանների մեջ պահպանված ուղղակի հիշատակություններից, ինչպես նաև շրջանավարտների հիմնած դպրոցների գործունեությունից: Տեղեկություններ կան նաև ուսուցման եղանակի մասին. սովորում էին «ի հարցաքննութիւնս Աստուածաշունչ մատենից: Վասն զի ի հարցաքննութեանց անտի ոչ միայն աստուածային խորք իմաստիցն յայտնեալ երևին, այլ առաւել ևս ի միտս և ի հոգիս հաստատեալ և միացեալ լինին, զի ուր ո՛չ է քննութիւն, և ո՛չ կատարեալ իմաստութիւն»[10]: Գլաձորում ընդօրինակված ձեռագրերը, որոնց ցանկը դրվում է հոդվածիս առընթեր, հականե հանվանե կներկայացնեն այն բոլոր գիտությունները, որ դասավանդվում էին Գլաձորի համալսարանում:

Կա սակայն մի ցանկ, որը լիակատար գաղափար է տալիս Գլաձորի ուսումնական ծրագրի սահմանների մասին: Այն Գլաձորի համալսարանի շարունակությունը հանդիսացող Տաթևի համալսարանում դասավանդված առարկաների ու գիտությունների թվարկումն է, որ բերում է այդ համալսարանի շրջանավարտներից մեկի կենսագիր Կիրակոս բանասերը Տաթևի համալսարանի շրջանավարտ Թովմա րաբունապետ Մեծոփեցու մասին խոսելիս: Անդրադառնալով իր ուսուցչի ստացած վարդապետական կրթության ծավալին՝ նա գրում է. «...էր ամենայն առաքինութեամբ զարդարեալ տեսականաւն, գործնականաւն և գիտնականաւն, զի ուսեալ էր զերկոտասան մասունք իմաստասիրութեան. զբնաբանականն, զուսումնականն, զաստուածաբանականն և զբարոյականն, զտնտեսականն և զքաղաքականն, զթուականն, զերաժշտականն, զերկրաչափականն և զաստղաբաշխականն, և զամենայն իմաստս հռետորական հանճարոյ արտաքին փիլիսոփայութեան է (7) գրոց, որ է Քերականն, Սահմանքն, Պորփիւրն, Ստորոգութիւնքն Արիստոտելին, Պերիարմենիասն, Աշխարհացն, Առաքինութեանցն, և զՀին և զՆոր կտակարանացն աստուածեղէն տառիցն Հ և Բ (72) գրոց և Ծ (50) նուրբ գրոց դժուարիմաց և խրթին բառիւք ծածկեալ աստուածազարդ և ուղղափառ սուրբ վարդապետաց, եւ զԾԱ (51) վիպասական պատմագրաց ի բերան առեալ պատմէր մարդկան...»: «Մեր միջնադարյան

[9] «Արձագանք», Թիֆլիս, 1888 թ., № 10, էջ 130—131:

[10] Գ. Հովսեփյան, Մխիթար Սասնեցի, Վաղարշապատ, 1899, էջ 29:

վարդապետարանների ծրագիրն է այս»,— գրում է Գ. Հովսեփյանը և ավելացնում. «Բացի յոթ իմաստասիրական գրքերից, այդ («արտաքին գրեանց»—Ա. Մ.) ցուցակի մեջ են մտնում Նյուսացու, Աստվածաբանի, Բարսղի, Փիլոնի, Դիոնիսիոս Արիսպագացու, նաև Եվագր Պոնտացու անվան հետ կապված որոշ գրքեր, որոնք «նրբեր» կամ «նուրբ գրքեանք» են կոչվում, Հին և Նոր կտակարանի «ԺԸ մեկնիչ» ինը Հին և ինը Նոր կտակարանից»[11]: Որ իսկապես Գլաձորում նույնպես սովորել են «վերկոտասան մասունք իմաստասիրութեան», և որ վերը բերված վարդապետական ծրագիրը ընկած է եղել Գլաձորի համալսարանի դասավանդման հիմքում, երևում է համալսարանի ռաբունապետ Եսայի Նչեցուն նվիրված Դավիթ աշակերտի ներբողից, ուր ասված է.

Թուով վակունս երկոտասան
Եւ վմարգարիտս անհասական,
Ամբարեալ ես ի շտեմարան
Ով գերահրաշ վաճառական...[12]

Իսկ որ իմաստության երկոտասան մասունքը, բնականաբար նաև նրա մեջ մտնող «ուսումնականը», այսինքն՝ քառյակ գիտությունները նույնպես դասավանդվում էին Գլաձորի համալսարանում, և դասավանդում էր Եսայի Նչեցին, երևում է նույն ներբողի հաջորդ քառատողից.

Ներանձնական վերնոյն կայան
Ներհուն իմաստից կրթական
Ով ներամիտ հոմերական
Եւ ներշրջանակ անհասական...[13]

Յոթ ապատ արվեստները ընկած էին նաև եվրոպական բարձր տիպի դպրոցների, հետագայում նաև համալսարանների դասավանդման հիմքում: Գլաձորի համալսարանի սաները տեղյակ էին այդ իրողությանը և գիտակցում էին, որ իրենց համալսարանը կանգնած է ժամանակի համապատասխան մակարդակի վրա: Չնայած անբարենպաստ պայմաններին, Վայոց ձորի հեռավորության և ժամանակի հոչակավոր կրթական կենտրոններից կտրված լինելու հանգամանքին, գլաձորցիները «հաւաքեալ հրճւին ի սմա հարապատ ծնունդք սուրբ եկեղեցոյ Հայկազինս տոհմի... ըստ էլլադական սահման պայմանի»[14]: Հելլադական կրթական ծրագիրը յոթ ապատ արվեստներն են: Հայկական համալսարանը, դասավանդվող առարկաների ծավալով ու խորությամբ, չէր վիջում Եվրոպայում այն ժամանակ գործող Հիսուսական համալսարաններին:

Այժմ ծանոթանանք Գլաձորում դասավանդվող առարկաների վարդապետական ծրագրին, ըստ վերը բերված տվյալների:

Իմաստասիրությունը բաժանվում է տեսական և գործնական մասերի: Տեսական իմաստասիրության նպատակը բանական ճանաչողությունն է, որն ունի երեք աստիճան՝ բնաբանական (ֆիզիկա), ուսումնական (մաթեմատիկա), աստվածաբանական (մետաֆիզիկա): Իմաստասիրության ձեռնամուխ եղող ամեն ոք, եթե ուզում է ճանաչել աշխարհը, պետք է սովորի այս աստիճանների պարունակությունը՝ նշված հերթականությամբ. «Քանզի պարտ է նախ ի բնաբանականէն յուսումնականն ամբառնալ և անդուստ յաստուածականն»[15]: Բնաբանականից կամ բնագիտությունից (ֆիզիկա) անմիջապես աստվածաբանության անցնելն անհնար է: Այդ պատճառով անհրաժեշտ է նյութական աշխարհի ճանաչումից հետո անցնել մաթեմատիկական գիտակարգերին, որոնք մի կողմից կապված են նյութական

---

[11] **Գ. Հովսեփյան**, Թովմա Մեծոփեցու կեանքը, Վաղարշապատ, 1914, էջ 1—2, ԺԳ:

[12] Սույն ներբողից մի տասնյակ քառատող բերելով՝ Ղ. Ալիշանը գրում է. «Առ սոյն Դաւիթ (նկատի ունի Դավիթ ռաբունապետին) կամ ի սոյն Դաւթի (ծանոթագրել է՝ «Քանզի սկզբնատառք տանց կապեն կայս բան. Ի Դաւիթ ի նուաստ յաջակ (եր) տէս»—Ա. Մ.) գտանեմ գրեալ թուղթ իմն երկար չափական բանիւ, ի գովեստ վարդապետին մեծի»: Սակայն ներբողից երևում է, որ այնտեղ փառաբանվում է Եսայի Նչեցին իր աշակերտներից մեկի՝ Դավթի կողմից: Լսենք աշակերտին.

«Յամենագով սուրբ մենարան,
Որ Գլաձոր կոչի անուամբ,
Անդ՝ ուր կայ գանձ անապական
Կարապետին սուրբ գերեզման,
Կաս ի սպասու առ սուրբ տապան
Եւ յաջորդես նորին պայման
Մեծ աթոռոյդ արհիական
Քաջ ռաբունիդ եղեր արժան»:

Այստեղից երևում է հստակորեն, որ Գլաձորի «անապական գանձը» կարապետի սուրբ գերեզմանն է, իսկ կարապետ մենաստանի հիմնադիրը Ներսես Մշեցին է, որի տապանին սպասավորում է Եսայի Նչեցին, որպես նրա՝ քաջ ռաբունու արհիական մեծ Աթոռի արժանի հաջորդ: Թյուրիմացության մեջ են նրանք, ովքեր կարծում են, թե ներբողը նվիրված է Դավիթ ռաբունապետին (Հմմտ. Լ. Խաչերյան, Գլաձորի համալսարանը, Երևան. 1973, էջ 150—154):

[13] **Ղ. Ալիշան**, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 135: Հմմտ. Նոր Հայկազեան Բառարան, հ. Բ, էջ 420. «Ներշրջանական խրատ»:

[14] Մատենադարան, ձեռ. № 1141, էջ 331ա:

[15] **Գրիգոր Մագիստրոս**, Թղթեր, Ալեքսանդրապոլ, 1908, էջ 8:

աշխարհի առարկաների հետ, իսկ մյուս կողմից ճանաչել են տալիս նրանց աննյութ ձևերը և նախապատրաստում մարդկային միտքը աննյութ էությունների բանական ճանաչողությանը: Այդ միջին օղակը՝ մաթեմատիկան, ընդգրկում է թվաբանությունը, երաժշտությունը, երկրաչափությունը և աստղաբաշխությունը: Սրանք կազմում են միջնադարյան կրթության այսպես կոչված քառյակը կամ քառյակ արվեստները, ճշգրիտ գիտությունների անհրաժեշտ չորս առարկաները:

Սակայն մինչև քառյակ արվեստներին հասնելը պետք է տիրապետել **եռյակ** գիտություններին, որի վերջին՝ երրորդ գիտությունն է տրամաբանությունը կամ դիալեկտիկան:

Դրանցից առաջինը **քերականությունն** է, որը դասավանդվող գիտությունների սկզբնական աստիճան է և բարձրագույն ուսուցման մեջ շատ կարևոր տեղ է գրավում, որովհետև այն գիտելիքներ է տալիս ոչ միայն լեզվի մասին, այլև գրականության, նաև գրչության արվեստի:

Եռյակի երկրորդ աստիճանը՝ **ճարտասանությունը** կամ **հռետորությունը**, ոչ միայն ճարտասանական արվեստի ուսուցումն էր, այլև պաշտոնական գրություններ, առօրեական նամակներ շարադրելու, ճառ, քարոզ, կենսագրություն կազմելու ունակությունների մշակումը և այլն: Ճարտասանը պետք է լինի պերճաբան, գեղեցկախոս, ներազդող, տրամաբանող, որպեսզի կարողանա տեղ հասցնել այն գաղափարը, որի պաշտպանության համար կոչված է: Գլաձորի համալսարանում, որպես ճարտասանության դասագիրք, օգտագործվել է Մովսես Քերթողին վերագրված «Գիրք պիտոյից» աշխատությունը:

Եռյակի երրորդ աստիճանը՝ **դիալեկտիկան** կամ **տրամաբանությունը**, Գլաձորում դասավանդվել է հիմնականում «Ներածութիւն Պորփիւրի», Դավիթ Անհաղթի «Վերլուծութիւն ներածութեանն Պորփիւրի», «Յաղագս ստորոգութեանցն Արիստոտելի», «Պերիարմենիաս կամ Յաղագս մեկնութեան Արիստոտելի», «Գիրք էակաց» աշխատությունների հիման վրա:

Այնուհետև սկսվում է ուսումնականի կամ մաթեմատիկայի ուսուցումը, որպես իմաստասիրության մասունքներ: Ինչպես հայտնի է, համարողության արվեստը Հայաստան է բերել և նրա հիման վրա «Քննիկոն» անունով դասագիրք է հորինել Անանիա Շիրակացին: «Քննիկոնում» ներկայացված են տեսական և գործնական **թվաբանությունը**, գումարման, հանման, բազմապատկման, բաժանման գործողությունները, կոյգ և կենտ, անկյունավոր թվերի աղյուսակներ, խնդիրներ, խրախճանականք, չափերի և կշիռների մասին գիտելիքներ: **Երաժշտությունը** երկրորդ առարկան է, որ մտնում էր քառյակ գիտությունների մեջ և դասավանդվում համալսարանում: **Երկրաչափությունը** պարապում էին Եվկլիդեսի «Տարերք» աշխատությամբ, **աշխարհագրություն** էին սովորում Շիրակացու և Վարդան Արևելցու դասագրքերով, **աստղաբաշխությունը**՝ Շիրակացու տիեզերագիտական և աստղաբաշխական աշխատություններով:

Տեսական և **գործնական** իմաստասիրությանը հետևում է «զամենայն իմաստս հռետորական հանճարոյ արտաքին փիլիսոփայութեան եաւթ գրոց, որ է Քերականն, Սահմանքն, Պորփիւրն, Ստորոգութիւնքն Արիստոտելին, Պերիարմենիասն, Աշխարհացն Առաքինութեանցն»: Այս երկերին մենք հանդիպեցինք արդեն վերևում, Գլաձորի համալսարանում դասավանդվող տարբեր առարկաների մասին խոսելիս: Այնուհետև գալիս են Հին և Նոր կտակարանների յոթանասուներկու գրքերը: Առաքել Սյունեցին, դարձյալ Տաթևի համալսարանի սան և Սյունյաց աթոռակալ, Աստվածաշունչ գրքի մի հիշատակարանում թվարկում է նշված ՀԲ (72) գրքերը.

«Տէր Առաքել դիտող Սիւնեաց,
Զուրկ և թափուր յամէն շնորհաց,
Շարադրեցի զկարգս գրանաց
ԶԱստուածաշունչ կտակարանաց,
Վասն այն յայտնեմ զբանս գրեանց
Զ Հին և զՆոր կտակարանաց,
Զի ուսանիս անուն կարգաց
Եաւթանասուն և երկու գրեանց
Քառասուն ու չորս գիրք Հին կտակին
Եւ քսան և ութ Նոր կտակին...»:

Ընդամենը յոթանասուներկու, և սկսում է թվարկել[16]:

Արտաքին գրքերի («որ ի դասս մտանեն») վերջում գրված է Աստվածաշնչի մա-

[16] Ծնունդք, Ելք, Ղևտական, Թիւք, Երկրորդ օրինաց, Աւրհնութիւն Յակոբայ, Յեսու որդի Նաւեա, Դատաւորք, Հռութ, Թագաւորութեանց չորս գիրք, Սաղմոս Դաւթի, Առակք Սողոմոնի, Ժողովող, Երգ երգոց, Իմաստութիւն Սողոմոնի, Յոբ, Սիրաք, Եսայի, Երեմիա, Եզեկիել, և երկոտասան մարգարէք, Եզր (Ա. Բ), Մնացորդաց (Ա. Բ.), Դանիէլ, Եսթեր, Բարուք, Մակաբայեցիք (Ա. Բ. Գ.), Տոբիթ, Յուդիթ, Նեեմի. ընդամենը՝ 44: Ավետարաններ՝ չորս, Թուղթ Պողոսի՝ տասնչորս, Գործք Առաքելոց, Կաթողիկէք՝ ութ, Տեսիլ Յովհաննու: «Աստ, եւթանասուն երկու լեզուին նոյնքան թուով գիրք շնորհեաց հոգին»,—գրում է Առաքել Սյունեցին: (Մատենադարան, ձեռ. № 2190, էջ 72ա);

սին. «Այս է Աստուածաշունչ գիրքն. ԺԸ մեկնիչ, Թ Հին կտակարանաց և Թ Նոր կտակարանաց: Ը քաղուածոյ Դ Հնոյ և Դ Նորոյ: Եւ Հին կտակարանքն ամէն Փ Շ Ղ Ա (8592) տուն է: Եվ Հին և Նոր կտակարանքն ամէնն ԺԷ ՌՁԻ (17 720) տուն է»:

Ձեռագրերում պահպանվել են արտաքին կամ նուրբ գրքերի ցանկեր այսպիսի խորագրերով. «Արտաքին գրեանք, զոր ի դասս մտանեն, այս են»[17], որոնք ունեն միավորների տարբեր քանակ: Մեր նշած ձեռագրերից առաջինում բերված է 28 անուն գիրք և վերջում ավելացված. «Նրբերն ԼԳ (33) գիրք է»: Բայց կա մի ցանկ, որտեղ նրանց թիվը համապատասխանում է Կիրակոս բանասերի նշած թվին՝ «Ծ նուրբ գրոց»: Նշանակում է՝ սա եղել է Գլաձորի համալսարանում դասավանդված նուրբ գրոց ցանկը: Ահա այն.

Թիւք նուրբ գրեանց

1. **Փիլոնի իմաստնոյն՝ Թ գիրք**
   ա. Նախախնամութեան՝ Խ
   բ. Նահապետացն՝ Ա
   գ. Հեսսեացն սրբոց՝ Ա
   դ. Այլաբանութեանն՝ Ա
   ե. Առաջին Որ ի լինելութեանց՝ ՂԹ
   զ. Երկրորդ Որ ի լինելութեանց՝ ՂԲ
   է. Երրորդ Որ ի լինելութեանց՝ ԿԲ
   ը. Չորրորդ՝ Երևեցանն՝ ՄԽԳ
   թ. Յելիցն բազմական՝ ՃԿԸ

2. **Սրբոյն Դիոնեսոսի՝ Ե գիրք**
   ա. Յաղագս երկնային քահանայապետութեան՝ ԺԵ
   բ. Վասն եկեղեցւոյ քահանայապետութեան՝ ԴԺ
   գ. Յաղագս աստուածային անուանց՝ ԺԲ
   դ. Յաղագս խորհրդական աստուածաբանութեան՝ Դ
   ե. Թուղթք կանոնք՝ ԺԲ

3. **Նիւսացիքն՝ Է**
   ա. Բնութեանն՝ գիրք՝ ԼԴ ճառ
   բ. Կազմութեանն՝ ԼԲ
   գ. Կուսութեանն՝ Ի
   դ. Ժողովողին՝ Ը
   ե. Երգ երգոցն՝ ԺԴ
   զ. Ինն երանութիւնք՝ Ը
   է. Հայր մեր որ յերկինս՝ Զ

4. **Սրբոյն Սեբերիանոսի ի մէջ քրիստոսասիրաց**

5. **Աստուածաբանն՝ Դ գիրք**
   ա. Քրիստոս ծնեալն՝ ԺԲ
   բ. Յաղթեցայն՝ Ը
   գ. Առ որսն՝ ԺԵ
   դ. Որք յԵգիպտոսէն՝ ԺԱ

6. **Սրբոյն Բարսեղի՝ Գ գիրք**
   ա. Պահոց՝ ԼԱ
   բ. Հարցողաց՝ ՅԿԱ
   գ. Վեցաւրէն՝ Թ

7. **Սրբոյն Եւագրեայ՝ Բ գիրք**
   ա. Կրօնաւորացն՝ ԺԴ
   բ. Հարիւրաւորքն՝ Լ

8. **Դաւթի փիլիսոփայի Սահմանաց իմաստասիրութեանն ԻԴ**

9. **Պրոկղ, Դիադոխոսն և Ամելախոսի լուծմունքն՝ ՄԺԱ**

10. **Քերական ԻԴ ճառ**

11. **Հերմէսն՝ Ա ճառ**

12. **Պորփիւրն՝ ԾԱ ճառ**

13. **Արիստոտելի՝ Ե գիրք**
   ա. Ստորոգութիւնքն՝ ՃԽ
   բ. Պերիարմենիասն՝ ՀԹ
   գ. Առաքինութեանցն՝ Ա
   դ. Աշխարհացն՝ Ա
   ե. Վերլուծութեանն

14. **Էակքն Դաւթի**

15. **Պէտքն Մովսէսի**

16. **Յովհաննու Մայրավանեցոց Գ գիրք**
   ա. Խրատավարքն
   բ. Հաւատոյ արմատն
   գ. Նոյեմակն

17. **Մեկնութիւնք Հին ու Նոր Կտակարանաց՝**
   ա. Սուրբ Եփրեմի
   բ. Սուրբ Եպիփանու
   գ. Ոսկեբերանին
   դ. Կիւրեղ Աղեքսանդրացւոյ

18. **Ճառասաց հայրապետացն Հայոց և մասնաւորաց**
   «Ահա կատարեցան նուրբ գիրքն»[18]

Եսայի Նչեցու ձեռագրերից մեկը սույն գրքերի պատճառների և լուծմունքների համառոտ շարադրանք է[19]: Բայց կան նաև «կԾԱ վիպասական պատմագրաց» երկեր: Դրանք վերաբերում են Գրիգոր Մագիստրոսի կողմից կրթության համակարգում մուծված առասպելավարժությանը: «Հայերեն «ա-

[17] Մատենադարան, ձեռ. № 2290, էջ 124 բ, ձ. 2961, էջ 72ա:

[18] Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երևան, 1959, էջ 41:

[19] Մատենադարան, ձ. № 437:

ռասպել» բառը նշանակում է և՛ կրոյց աստվածների և դիցավների մասին, և՛ առակ արդի սովորական իմաստով,—գրում է Մ. Աբեղյանը։— Գրիգոր Մագիստրոսն այդ երկու նշանակությամբ էլ հասկանում է այդ բառը։ «Առասպելների» համար նա իբրև աղբյուր գրում է «ի բազում և պանապան տեղիս եղելոյ», ուրեմն դրանք պետք էր վարժության համար քաղել ամեն տեղից, ուր կային այդպիսիները, ոչ միայն գրքերից, այլև ժողովրդական ավանդությունից... «ի գռեհիկս ասանդեալ» հանրածանոթ խոսքը ծագում է հին Վիպասանքից»[20]։ Ինչպես տեսնում ենք, առասպելավարժության նյութը ծագում է հին վիպասանքից, որից էլ՝ «վիպասականքը»։ Այնուհետև Մ. Աբեղյանը նշում է, որ այն ժամանակ Մագիստրոսը օգտագործում էր ինչպես Ոլոմպիանոսի առակները, այնպես էլ Անանիա Շիրակացու «Մեծ Քննիկոնը»։

Եսայի Նչեցու նշված ժողովածուի մեջ նուրբ գրոց պատճառների շարադրանքի հետ հանդիպում ենք նաև Ողիմպիանոսի առակներին (էջ 293բ, դժբախտաբար պահպանվել է միայն տասնմեկ առակ։ Հաջորդ թերթերը թափված են), «Սակս աւերման Իլիոնի և շինելոյ Հռոմայ» և այլ վիպասական, առասպելական նյութերի։ Դրանց մեջ են մտնում նաև նուրբ գրքից քաղված առասպելական, պատմական հատվածներ, որ կարելի էր «բերան առեալ պատմել»։ Մասնավորապես դրանք վերաբերում են Գրիգոր Աստվածաբանի ճառերի մեջ օգտագործված առասպելներին։ Դավիթ Քոբայրեցին, որը շարադրել է «Լուծմունք ճառից Գրիգոր Աստվածաբանի», վերջում ունի «Ժողովարանք պատմութեան առասպելաց Նոնոսի» երկը[21]։

Համալսարանի ուսումնական ծրագիրը հարստացավ միարարական շարժման դեմ բացահայտ պայքարի ընթացքում։ Կիլիկյան հայկական իշխանությունը եգիպտական արշավանքների դեմն առնելու համար Արևմուտքից օգնության փոխարեն պապական քարոզիչներ ստացավ, որոնք տարածվեցին Հայաստանում և կաթոլիկական Եկեղեցու օգտին քարոզներով խարխլում էին հայ ազգային միաբանությունը, սպառնում մայրենի լեզվին, Եկեղեցուն, ազգային ավանդություններին և այդ ճանապարհով՝ ժողովրդի գոյությանը։ 1292 թ. պապի ճնշման տակ Կիլիկիայի թագավորը և կաթողիկոսը ընդունեցին կաթոլիկ և հայ Եկեղեցիների միության առաջարկը։ Ժողովուրդը դիմադրեց, Կիլիկիայում սկսվեցին բռնություններ։ Միարարների դեմ արմատական և կազմակերպված պայքար մղելու համար համալսարանի ծրագրում հարկ եղավ մտցնել կաթոլիկ գաղափարախոսների աշխատությունները՝ իրենց կենքով իրենց դեմ պայքարելու համար։ Պայքարը ղեկավարում են համալսարանի րաբունապետ Եսայի Նչեցին և առաջին շըրջանավարտ, Սյունյաց աշխարհի հոգևոր առաջնորդ Ստեփանոս Օրբելյանը։ Նրանք նախ հրավիրում են աշխարհիկ և հոգևոր առաջնորդների ժողով և կաթողիկոսին ուղարկում են բողոքագիր, որով մերժում են թագավորի և կաթողիկոսի որոշումը՝ որոշակիորեն գրելով. «Համաձայն ենք մեր հայրերի հետ դժոխք իջնել, քան թե կաթոլիկների հետ երկինք ելնել»։ Բողոքագրի տակ Եսայի Նչեցին ստորագրում է իր և աշակերտների անունից։ Նա մի շարք թղթեր և շրջաբերականներ է ուղարկում տարբեր գավառներ, հանձնարարություններ տալիս Գլաձորի սան-րաբունապետներին և թեմերի առաջնորդներին, որոնք տեղերում ոչ պակաս եռանդուն պայքար են ծավալում միարարների դեմ։

Նչեցին թղթերից մեկում նախ մերկացնում է Կաթոլիկ Եկեղեցու համաշխարհային մեծապետական նկրտումները՝ նշելով, որ «քրիստոնեութեան հաւատ ի կամքն է և ոչ բռնութիւն», որ բռնություն կռապաշտ թագավորներ էին կիրառում, որ քրիստոնեական Եկեղեցին մեկ է և մի Եկեղեցի մեծ և փոքր չի կարող լինել։ Թագավորը պետք է իմանա, որ իր հպատակներին արտաքին թըշնամիներից չպաշտպանող ամեն մի թագավոր դատվում է Տիրոջից։ Կաթողիկոսն էլ ավելի շատ պետք է մտածի իր հոտի մասին, կազմակերպի Եկեղեցին, քարոզներ կարդա, բացատրի իր ժողովրդին հավատի էությունը, դաստիարակի, դպրոցներ բաց անի և այլն։ Այնինչ ժողովուրդը անտերունչ է, ոչինչ չի լսում, առաջնորդներից ահ չունի, որովհետև նրանք սխալ ճանապարհով են գնում։ Ժողովուրդը գիտությունից հեռացած է, դավանություն չգիտե, որովհետև չի դաստիարակված, աղոթք չգիտե, քանի որ չի կրթված, պատարագ չի ուզում, փի ուսյալ չէ։ Մինչդեռ այս բոլորը պետք է հոգար Եկեղեցու գլուխը[22]։ Նչեցին հաճախ անձամբ գնում էր գավառներն ու վանքերը «աղօթից պատճառաւ», ուր քարոզում էր ժողովրդի մեջ, հուսադրում, դաստիարակում. «Մի քանդիր հայրենի ցանկապատը և մի արհամարհիր նախահայրերի սահմանած կարգ ու կանոնը»։ Նչեցին գավառներից ընտրում էր ուշիմ երեխաների, որոնց հա-

[20] Մ. Աբեղյան, «Երկեր», հ. 4, էջ 38—39։

[21] Ն. Պողարյան, Ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Բ, Երուսաղեմ, 1967, էջ 389։

[22] Ն. Պողարյան, Մայր Ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Գ. Երուսաղեմ, 1968, էջ 612—616։

մար Գլաձորում բաց էր արել նաև քահանայական դասարան: Ավարտելուց հետո ոմանք շարունակում էին ուսումը, մյուսները՝ գավառներ վերադառնում, որպես եկեղեցու սպասավորներ:

Համալսարանական ընդարձակ և հագեցված ծրագրի յուրացումը ինչպես դասախոսներից, այնպես էլ ուսումնատենչ պատանիներից պահանջում էր յոթնամյա տքնաջան և ինքնամոռաց աշխատանք:

Գլաձորի համալսարանում ուսման տևողությունը, երբ նրանք ունեին քահանայական կրթություն, 7—8 տարի էր, նայած աշակերտի ընդունակություններին, թե նա ինչքան ժամանակում կարող էր յուրացնել վարդապետական ծրագրի մինիմումը[23]:

Իսկ Եսայի Նչեցին իր աշակերտներին համարում է «բոլոր կենցաղական հոգոց բարեաւ մնալ ասացեալք»: Ուսումնառության շրջանն ավարտելուց հետո, Գլաձորի համալսարանի շրջանավարտին շնորհվում էր վարդապետական աստիճան: Վարդապետական աստիճանը կամ գավազանը շնորհվում էր որոշակի կարգով: Ձեռագրական հիշատակարանները և մանավանդ ձեռագրերում պահպանված ուսանողական ատենախոսությունները ցույց են տալիս, որ վարդապետական աստիճան կամ հրաման ստանալը համալսարանի ռաբունապետության կողմից ղեկավարվող ու անցկացվող արարողություն է եղել և կրել է գիտական-պաշտոնական բնույթ:

Շրջանավարտը պարտադիր կարգով քննություն է հանձնել իր անցած դասընթացից: Քննությունից վատ նրան հանձնարարվել է որևէ երկ՝ ավարտաճառ շարադրելու և պաշտպանելու համար: Պաշտպանությունը իրականացրել է համապատասխան մի հանձնաժողով: Պաշտպանությանը ներկա են եղել ռաբունիներ, արդեն պաշտպանած շրջանավարտներ, հրավիրված հոգևոր և աշխարհիկ իշխանության ներկայացուցիչներ, ինչպես նաև առանձին շրջանավարտների հոգևոր ծնողներ-հովանավորողներ, որոնց մեջ հիշատակվում են նաև կանայք:

Գլաձորի համալսարանի ատենախոսությունները տեղի են ունեցել հենց Աղբերց վանք կամ Գլաձորի վանք մականվանված Ս. Ստեփանոս Նախավկայի վանքում, իսկ պսակադրողը եղել է Գլաձորի համալսարանի ռաբունապետ և Գլաձորի վանքի առաջնորդ Եսայի Նչեցին: Գլաձորի համալսարանի շրջանավարտների թիվը 360 են համարում, որոնք **ռաբունի** կոչումն են ստացել:

Գլաձորի սաներից Առաքել Հաղբատեցին, որն համալսարանն ավարտելուց հետո Թիֆլիսի հոգևոր դպրոցի ռաբունապետն էր եղել, իր ուսուցիչ Եսայի Նչեցու գործունեության արդյունքը այսպես է ներկայացնում. «Թողլով վաւակ ժառանգութեան բաւում ի ծոցս եկեղեցոյ և ի հանդիսարանս վարժարանացն»: Ուրեմն Գլաձորի համալսարանը պատրաստում էր եկեղեցու սպասավորներ և վարժարանների վարդապետներ, ուսուցչապետներ, որոնք կոչվում էին ռաբունիներ:

Դավիթ Գետկեցին այսպես է նկարագրում Նչեցու աշակերտներ հավաքելու գործունեությունը. «...ցուպ ի ձեռին առեալ, վտհաս և կանիմաստ համբակս ժողովէ ի փարախս իմաստութեան, ընդ որ եւ այժմ է տեսանել, վի ի բաւում գաւառաց կան դեգերեալ առ պէտս վարժից եւ տէլէտս իմաստից, իսկ սա գործէ և կապմէ վխոպանացեալ անդաստանս իւրոց աշակերտեալ մանկանց, ի վեր բողբոջէ արս կատարեալս իւրով որոշմամբ եւ քաղցրուսոյց վարդապետութեամբ»[24]:

Գլաձորի սաներից շատերը իրենց կամ այլ գավառներում հիմնեցին իրենց դպրոցները. Դավիթ ռաբունապետը ղեկավարում էր Վերին-Նորավանքի դպրոցը: Նրան փոխարինեց Կյուրեղը: Մխիթար Սասնեցին ղեկավարում էր Մեծոփա վանքի դպրոցը Քաջբերունիքում, Հովհաննես Արճիշեցին՝ Այրիձորի դպրոցը, Մաթեոս Կիլիկեցին՝ Կողբավանքի դպրոցը Այրարատում, Առաքել Հաղբատեցին՝ Թիֆլիսում, Ավետիս Հաղբատեցին՝ Հաղբատում, Կիրակոս և Հովհաննես Երվնկացիները՝ Երվնկայում, Մկրտիչ Թեղենացին՝ Թեղենիքում, Ավագը՝ Սալմաստում, Վարդան Կիլիկեցին՝ Կիլիկիայի Ձորավանքում:

Եսայի Նչեցու մահից հետո համալսարանը 1338 թ. տեղափոխվում է Հերմոնի վանք՝ Տիրատուր Կիլիկեցու ղեկավարությամբ, և այնտեղ մնում մինչև 1356 թ.: Այդ թվականից համալսարանը տեղափոխվում է Որոտնա վանք՝ Հովհաննես Որոտնեցու ռաբունապետությամբ, և այնտեղ մնում է մինչև 1384 թ., ապա տեղափոխվում Ապրակունյաց վանք:

[23] Այսպես՝ Մշո Առաքելոց վանքից Վահրամի որդի Ներսեսը Գլաձորում յոթ տարի սովորելուց հետո է վարդապետական աստիճան ստանում, իսկ Կարապետ Տոսպացին՝ ութ տարի: Երբեմն այս ժամանակը խախտվում էր՝ ելնելով ինչ-ինչ հանգամանքներից, ինչպես այն պատահեց Ստեփանոս Օրբելյանի հետ, որը Ներսես ռաբունապետի մոտ երկու տարի սովորելուց հետո վարդապետական աստիճան ստացավ Սյունյաց միտրոպոլիտ ձեռնադրվելու անհրաժեշտությունից մղված: Հովհաննես Որոտնեցին Քաջբերունիքից իր մոտ սովորելու եկած երկու երիտասարդներից մեկին՝ Ստեփանոսին, երեք տարի սովորելուց հետո, վարդապետական գավազան տալով հայրենի գավառ է ուղարկում, «վի անտերունչ էր գաւառն այն», իսկ Հովհաննես Մեծոփեցուն՝ 12 տարի հետո:

[24] Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 350:

1386 թ. մահանում է Որոտնեցին: Նոր բաբունապետ է նշանակվում Գրիգոր Տաթևացին, և համալսարանը տեղափոխվում է Տաթևի վանք, որտեղ նրա բաբունապետությամբ այն գործում է մինչև 1410 թվականը: Նրան հաջորդում է Մխիթար բաբունապետը մինչև 1425 թ., ապա՝ Եղեկիելը, մինչև 1435 թ. արշավանքը, երբ ավերվում է Տաթևը:

Գրիգոր Տաթևացու աշակերտներից Թովմա Մեծոփեցին մինչև 1446 թվականը ղեկավարում է Մեծոփա վանքի բարձր դպրոցը, որ հիմնադրել էր ինքը՝ Գրիգոր Տաթևացին: Հովհաննես Հերմոնեցին Հերմոնի դպրոցն է ղեկավարում մինչև 1450-ական թվականները: Տաթևացու աշակերտներ Հովհաննես Հերմոնեցի և Թովմա Մեծոփեցի բաբունապետները կատարեցին իրենց մեծ բաբունապետի ցանկությունը. ամենայն հայոց կաթողիկոսությունը վերահաստատեցին իր պատմական տեղում, Վաղարշապատ քաղաքի Ս. Էջմիածին վանքում 1441 թվականին:

Ներսես բաբունապետի 1282 թ. Գլաձորում հիմնադրած համալսարանը Եսայի, Տիրատուր, Հովհաննես, Գրիգոր Տաթևացի բաբունապետների ղեկավարությամբ միջնադարյան ծանր պայմաններում գոյատևում է 150 տարի Հերմոնի, Որոտնա, Տաթևի վանքերում՝ աներևակայելի, անօրինակ դիմացկունություն հանդես բերելով միջնադարյան Հայաստանի մշակութային կենտրոնների պատմության մեջ:

Միջնադարյան Հայաստանում թաթարմոնղոլական, լենկթեմուրյան, այլալան ցեղերի արշավանքների, ավերածությունների, կամայականությունների, Կաթոլիկ Եկեղեցու դավանաբանական նկրտումների պայմաններում հայոց համալսարանի 150-ամյա գոյությունը հերոսություն է, հայ ժողովրդի կենսունակության վառ ապացույց, հայ մտավորականության, Եկեղեցու և մշակույթի գործիչների՝ հայրենիքի և ժողովրդի անկախության պահպանության համար ցուցաբերած անսահման սիրո և նվիրվածության արտահայտություն, որի համար հիմնական վենքը դարձյալ մայրենի լեզուն ու գիրն էր, նախնիների ավանդներին հավատարմությունը: